ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 4.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի նիստի
30 նոյեմբերի 2015թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Կ .Հ. Հովսեփյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 11 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2015-2016 թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քնությունների և ստուգումների գրաֆիկների հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *2015-16 ուստարվա I կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Այլ հարցեր:*

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցը ներկայացրեց խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2015-2016թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քնությունների և ստուգումների ժամանակացույցը՝ 07.12.2015-19.12.2015թ., որը կազմվել է համաձայն ՈւՄՎ կողմից տրված բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի ժամանակացույցի:

Տեղի ունեցավ ընդհանուր քննարկում և առաջարկվեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենությանը հաստատելու 2015-2016թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քնությունների և ստուգումների ժամանակացույցը:

2. Հանձնարարել ամբիոններին ընթացիկ քննությունները և ստուգումները անցկացնել սահմանված կարգով:

Օրակարգի երկրորդ հարցը ներկայացրեց գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2015-2016թթ. ուստարվա I կիսամյակի ստուգարքային շրջանի, քննաշրջանի ժամանակացույցը. 09.01.2016-25.01.2016, որը կազմվել է համաձայն ՈՒՄՎ կողմից տրված բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2015-2016 ուստարվա առաջին կիսամյակի ժամանակացույցի: Նա ընդգծեց, որ վերոնշյալ ժամանակացույցը բազմիցս քննարկվել է ամբիոններում և խմբերում:

Զեկուցողը հանձնարարեց ամբիոններին վերանայել հարցաշարերը, քննական տոմսերը կազմել անցած նյութի հիման վրա: Քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ դեկանատին՝ սահմանել հսկողություն, քննաշրջանը անցկացնել գրաֆիկին համապատասխան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գիտքարտուղար Մ. Ս. Աթոյանը: Նա համակարծիք էր ներկայացված նյութին:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ներկայացնել տնօրենությանը հաստատելու 2015-2016թթ. ուստարվա I կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:

2. Հանձնարարել ամբիոններին, որ քննական տոմսերը կազմվեն ըստ կրթական ծրագրի:

Այնուհետև ֆակուլտետի խորհրդի նախագահը անդրադարձավ ներֆակուլտե-տային ուսումնական գործընթացին՝ մասնավորապես քննարկվեց ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահների ընտրության հետ կապված հարցեր:

ՆԱԽԱԳԱՀ	**Մ.Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**
ՔԱՐՏՈՒՂԱՐ	**Կ. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆ**